ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIK OF ARMENIA

ARMAVIR MARZ

MIASNIKYAN MUNICIPALITY


Արմավիրի մարզ գ. Մյասնիկյան
Փող. Մյասնիկյան
Հեռ. (0233) 74-6-73

Armavir marz Miasnikyan village
Str. Miasnikyan
Tel. (0233) 74-6-73


«10» մայիսի 2017թ

Թիվ 070

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

*Հարգարժան պարոն մարզպետ*

Ձեզ ենք ուղարկում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ղեկավարի 2017թվականի ապրիլ ամսվա ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր «5» թերթից.

Համայնքի ղեկավար՝ Տ. Բաղդասարյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.93/7221-17
«15» 05 2017թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք,Մյասնիկյան փող. 4շենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ.փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«11» ապրիլի 2017 թվականի N 26-Ա

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 17-րդ հոդվածի սահմանված դրույթներով, ***որոշում եմ՝***

1. 2017թվականի ապրիլի 18-ին ժամը 17:00-ին հրավիրել Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ավագանու արտահերթ նիստ ՝ հետևյալ օրակարգով:
   - Համայնքի ավագանու «Մյասնիկյան համայնքի 2017թվականի բյուջեն հաստատելու մասին» N 10-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
   - Մյասնիկյանի համայնքապետարանը «ՀայաստանիՀանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ վերանվանելու և կանոնադրությունը հաստատելու մասին.
   - Գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին.
   - Համայնքի բյուջեից դրամական օգնություն տրամադրելու մասին.
   - Համայնքի մանկապարտեզում աշխատանքներ կատարելու համար գումար հատկացնելու մասին.
   - Համայնքի բյուջեից «Շենիկ»ՋՕԸ-ին գումար հատկացնելու մասին.
   - Համայքի կուլտուրայի տան և գրադարանի մասնակի վերանորոգման համար գումար հատկացնելու մասին.
   - Համայնքում կանաչապատման աշխատանքներ կատարելու համար գումար հատկացնելու մասին.

2.Նիստի օրակարգի նախագիծը տրամադրել ավագանու անդամներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ S.Բարդասարյան

2017թվականի ապրիլի 11
հ.Մյասնիկյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

«14» ապրիլի 2017թ. N - 27

### ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման,հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2012 թվականի հունվարի 18-ի <<Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին>> թիվ 9 որոշումը.

*Որոշում եմ՝*

1.Քաղաքացի Միշա Հակոբի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանին տալ հասցե՝ Հայաստան Հանրապետություն Արմավիրի մարզ Մյասնիկյան համայնք Բաղրամյան փողոց N 27/1 հասցեն:
2.Սույն որոշումն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ S.Բաղդասարյան

2017 թվականի ապրիլի 14
Մյասնիկյան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

---

<< 28 >> ապրիլի 2017թ. որոշում 28-Ա

## ԳԱԳԻԿ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով , համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի բնակիչ՝ Գագիկ Անդրանիկի Անտոնյանի 2017 թվականի ապրիլի 20-ի անձնական դիմումը .

Որոշում եմ՝

1. Մյասնիկյան համայնքի բնակիչ՝ Գագիկ Անտոնյանին տալ շինարարության թույլտվություն :
2. Համաձայն սահմանված կարգի իրականացնել տեղական տուրքի վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ. Բաղդասարյան

<< 28 >> ապրիլի 2017թ.
Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

<< 28 >> ապրիլի 2017թ. որոշում 29-Ա

# ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և 46-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով.

Որոշում եմ `

1. Վերսկսել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի <<Մյասնիկյանի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրական կազմակերպության աշխատանքային գործունեությունը :
2. 2017 թվականի մայիսի 1-ից հայտարարել մանկապարտեզը բացված:
3. Մանկապարտեզի տնօրենին` ( Ռ. Մանուկյան ) իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթները:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար` Տ. Բաղդասարյան

<< 28 >> ապրիլի 2017թ.
Մյասնիկյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք,Մյասնիկյան փող. 4շենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ.փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

### ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«03» ապրիլի 2017թվականի N 11-Ա

### ԱՐՄԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 95-րդ հոդվածի երրորդ կետի 6-րդ ենթակետով և հիմք ընդունելով Արմինե Ավետիսյանի 2017թվականի ապրիլի 3-ի անձնական դիմումը, *կարգադրում եմ՝*

1.Արմինե Հովհաննեսի Ավետիսյանին ժամանակավոր նշանակել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի գրադարանում՝ որպես գրադարանավարուհի:

2.Ա.Ավետիսյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2017թվական ապրիլի 3
Հ. Մյասնիկյան